

Հաշվետվություն

ՀՄԿ-ՀՓՄ գլոբալ կոնֆերանս

2023թ.-ի հունիսի 6-ից 8-ը Տոկիոյում (Ճապոնիա) Համաշխարհային մաքսային կազմակերպության (այսուհետ՝ ՀՄԿ) և Համաշխարհային փոստային միության (այսուհետ՝ ՀՓՄ) ներկայացուցիչների միջև կայացավ «Մաքսային և փոստային համագործակցության միջոցով միջսահմանային էլեկտրոնային առևտրի մարտահրավերները և հնարավորությունները» թեմայով համաժողով:

2023թ.-ի հունիսի 6-ին 1-ին նիստում բացման խոսքով հանդես եկան ՀՄԿ գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիան, ՀՓՄ գլխավոր տնօրեն Մասահիկո Մետոկին, Ճապոնիայի ներքին գործերի և հաղորդակցության նախարարը, Ֆինանսների նախարարը, Համաշխարհային Փոստային Միության միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենը, ապա հիմնական զեկույցով հանդես եկավ Ճապոնիայի Ֆինանսների նախարարության մաքսային և սակագնային բյուրոյի գլխավոր տնօրեն Քենջի Սուվազոնոն:

2023թ.-ի հունիսի 6-ին կայացած 2-րդ նիստը նվիրված էր «Համաշխարհային փոստային մատակարարման շղթայի, մաքսային հայտարարագրման և գործառնական մոդելների փոփոխություններին» թեմային: Այս նստաշրջանին մասնակցում էին ՀՄԿ գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիան, ՀՓՄ միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենի տեղակալ Մարիան Օսվալդը, Ավստրալիայի սահմանային ուժերի համանախագահ Սաոա Նիքոլսոնը, ՀՓՄ վարչական խորհրդի նախագահ Իսահակ Գնամբա-Յաոն: Զեկուցողները հայտարարեցին, որ այժմ աշխատանքներ են տարվում էլեկտրոնային առևտրի ոլորտում առաջընթաց գրանցելու և առկա մարտահրավերներին դիմակայելու նպատակով: Զեկուցողները պատասխանեցին նաև մասնակիցների հարցերին, ինչպես նաև նշեցին, որ այս համաժողովը կօգնի բարելավել փոստային առաքանիների վերահսկումը և կնպաստի մաքսային հայտարարագրման խնդիրների լուծումներին:

2023թ.-ի հունիսի 6-ին կայացած 3-րդ նիստը նվիրված էր «Համապատասխանության ապահովումը և ռիսկերի կառավարումը փոստային

մատակարարման շղթայում» թեմային:


Այս նստաշրջանի ընթացքում ՀՓՄ-ի անվտանգության ծրագրի ղեկավար Դոն Ուիլքսը կիսվեց ՀՓՄ կողմից մինչ այժմ կատարված փոստային անվտանգության աշխատանքների և ոլորտում կարողությունների զարգացման միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությամբ: Նա ներկայացրեց վերջին տարների ընթացքում տարբեր երկրներում և՛ առցանց, և՛ առկա եղանակով փոստային անվտանգության վերաբերյալ դասընթացները, որոնք տալիս են մասնակիցներին փոստային անվտանգության վերաբերյալ բավարար գիտելիքներ: Դասընթացների ավարտին մասնակիցներին հանձնվում են նաև համապատասխանության սերտիֆիկատներ:

ԱՄՆ փոստային տեսչության ծառայության գլխավոր տեսուչ Գարի Բարկսդեյլը կարճ տեսանյութ ցուցադրեց այն գործընթացների մասին, որոնք մինչ այժմ իրականացնում էր ԱՄՆ Փոստային բաժանմունքը և բացատրեց բաժանմունքի գործառույթները: Վերջինս նշեց նաև, որ փոստային ծառայությունն իրենց մոտ ունի 250 տարվա պատմություն, 1.2 մլն փոստատան աշխատակիցներ, 500 փոստային ուստիկանության սպաներ:

Թմրամիջոցների վերահսկման միջազգային կոմիտեի (IWC) ծրագրի ղեկավար Ֆումիո Իտոն և IWC-ի թմրամիջոցների վերահսկման և հանցագործությունների կանխարգելման հարցերով պատասխանատու Ամպարո Էստրուչը իրենց ելույթներում շեշտեցին, որ կան ապօրինի սինթետիկ թմրամիջոցների որոշ տեսակներ, որոնք վտանգավոր ազդեցություն են ունենում մարդկանց առողջության վրա, ինչպես նաև կան նմանօրինակ դեղերի բազմաթիվ տեսակներ, որոնց ապօրինի շրջանառության դեմ պայքարելու համար անհրաժեշտ է սերտ համագործակցություն փոստային ստորաբաժանումների, մաքսային մարմինների և այլ համապատասխան կազմակերպությունների միջև: Միաժամանակ պարզաբանվեց թմրամիջոցների ապօրինի շրջանառության նոր եղանակների վերաբերյալ որոշ տեղեկություններ:



NEW TRAFFICKING MODALITIES: FOCUS ON 4'M' AREAS



- Substances of abuse, frequently non-scheduled ones, are manufactured to order or marketed online, delivered through postal/courier services, and paid online.
- This new trafficking modalities was further spread and well rooted during the pandemic.
- As risks of being misused for illicit purposes increases with all the 4 'M' areas of industry, so are threats to postal security conspicuously heightened due to increased attempts to illicitly ship synthetic opioids and other potent substances.

GRIDS ION UNES

Խոսվեց նաև այն մասին, որ սինթետիկ թմրանյութերի գերդոզավորման համաճարակը շարունակում է հարվածել ամբողջ աշխարհին՝ ամեն տարի հանգեցնելով մահվան աննախադեպ թվի: Այդ վտանգավոր նյութերի միջազգային մատակարարումն իրականացվում է շատ փոքր քանակությամբ, ինչը դժվարացնում է դրանց հայտնաբերումը: Բացի այդ, այդ ապրանքների առաքումները հաճախ իրականացվում են միջազգային փոստային առաքանիների, էքսպրես սուրհանդակային ծառայությունների միջոցով, ընդ որում առաքվում են կասկած չհարուցող երրորդ երկրների միջոցով, ինչն ավելի դժվարեցնում է փոխադրման հետ կապված ռիսկերի գնահատումը: Հետախուզական տեղեկատվության փոխանակումը և միջազգային համագործակցությունն առաջնային նշանակություն ունեն ազգային մակարդակում վտանգավոր անվերահսկելի նյութերի արտադրության, վաճառքի և վերաբաշխման արդյունավետ կանխարգելման համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշվեց, որ արձագանքելով անդամ պետությունների խնդրանքներին The International Narcotics Control Board (INCB) փորձագիտական մարմնում ստեղծվեց Global Rapid Interdiction of Dangerous Substances (GRIDS) ծրագիրը, որն ուղղված է պայքարելու թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ: Հարկ է նշել, որ այն իր մեջ ներառում է նախկինում շրջանառվող մի քանի ծրագրեր, որոնք նույնպես ուղղված էին թմրանյութերի ապօրինի շրջանառությանը:


Այս նստաշրջանի վերջում բանախոսները ամփոփախանեցին մոդերատորի և մասնակիցների մի քանի հարցերին և այս նստաշրջանից եկան այն եզրահանգմանը, որ փոստային մատակարարման շղթայում ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ է սերտ համագործակցություն համապատասխան կազմակերպությունների միջև:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում են անդամակցել այս ծրագրին և առաջատար մի շարք երկրների հետ փոխանակվել տեղեկատվությամբ՝ պայքարելով թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ:

2023թ.-ի հունիսի 6-ին կայացավ 4-րդ նիստը նվիրված էր «փոստային առաքանիների էլեկտրոնային առևտրին»:

Alibaba Group-ի փոխնախագահ պարոն Լի Ուչանգ Կայնաոն մասնակիցներին պատմեց Alibaba Group-ի փոստային առաքման ծառայության աշխատանքի և այն մասին, թե ինչպես են նրանք ղեկավարում այդպիսի հսկայական քանակությամբ փոստային առաքումների բաժանումը, հավաքագրումը և առաքումը: Ըստ զեկուցողի՝ նրանք մշակել են իրենց սեփական համակարգը՝ հսկայական քանակությամբ տվյալներ վերլուծելու համար, ինչպես նաև օգտագործում են մշակված տեխնոլոգիաները՝ փոստային առաքումներն առանձնացնելու համար:

Անդրսահմանային հետազոտությունների հետազոտական ասոցիացիայի ղեկավար Թոնի Մանիստեն խոսեց էլեկտրոնային առևտրի վերահսկման ոլորտում իր հետազոտության արդյունքների մասին: Ըստ նրա ուսումնասիրության՝ էլեկտրոնային տվյալները շատ կարևոր են վերահսկողություն իրականացնելու համար, և փոստային ծառայություններն ու մաքսային ծառայությունները պետք է սերտ համագործակցեն և միմյանց հետ կիսվեն փոստային ապրանքների վերաբերյալ հնարավորինս շատ տեղեկատվությամբ: Վերջինս ներկայացրեց նաև թե ինչպես է այսօր տեղի ունենում առաքանիների մատակարարման գործընթացը:



Նշվեց նաև, որ ներպետական առաքումները զգալի քանակով զիջում են միջսահմանային առևտրի քանակին, ուստի բոլոր երկրների մաքսային մարմինները պետք է ձեռնամուխ լինեն մաքսային հսկողության արդյունավետության բարձրացմանը:

Առևտրի հոսքերի վերաբերյալ բարձրորակ տվյալները կարևոր են ռիսկերի վրա հիմնված մաքսային հսկողության համար: Ռիսկերի վրա հիմնված մոտեցումը մեծապես հիմնված է ընտրովի թիրախավորման վրա, որտեղ մաքսային մարմինները գնահատում են բեռնափոխադրումների ռիսկի մակարդակը և ընտրում են ամենավտանգավորները՝ վերահսկելու համար: Թիրախային հսկողությամբ որոշվում է, թե որ ծանրոցները պետք է ընտրվեն հսկողության համար և ինչ չափով, որտեղ, երբ և ինչ տեխնիկական միջոցներով պետք է ուսումնասիրվեն ընտրված ապրանքները: Ռիսկի վրա հիմնված ընտրովի հսկողությունն օգնել է ԵՄ մաքսային վարչակազմերին հաղթահարել միջսահմանային առաքումների աճը և սահմանային անվտանգության բարձրացման պահանջները:

Նորվեգիայի մաքսային ծառայության ներկայացուցիչ Վիգգո Էլսթերը իր ելույթում ներկայացրեց Նորվեգիայի մաքսային ծառայության փոստային առաքման հսկողության պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվությունը:

Կանադայի փոստային ծառայության ներկայացուցիչ Ստեֆանի Գլովերը խոսեց փոստային ծառայության և մաքսային ծառայության միջև համագործակցության և փոխգործակցության մասին: Վերջին երկու բանախոսները նշեցին նաև հսկայական քանակությամբ տվյալների վերլուծության և դրանց արագ հավաքման հետ կապված որոշ դժվարություններ:

2023թ.-ի հունիսի 7-ին կայացած 5-րդ նիստը նվիրված էր «Էլեկտրոնային նախնական տվյալների, նորմատիվային և գործնական խնդիրների և տրամադրվող տվյալների որակին» թեմային:

Ճապոնիայի ֆինանսների նախարարության մաքսային ծառայության ներկայացուցիչ Ակիհիրո Օդան մասնակիցներին տեղեկացրեց Ճապոնիայի մաքսային ծառայության հաջողությունների և խնդիրների մասին: Իր ելույթում նա նշեց փոստային ծառայության և մաքսատան համագործակցության անհրաժեշտությունը, ինչպես նաև առաջատար տեխնոլոգիաների հսկայական դերը:


Ներկայումս Ճապոնիայի մաքսային ծառայությունը օգտագործում է Electronic Advance Data (EAD) համակարգը: Այս համակարգով տվյալների ստացումից հետո, նրանք վերլուծում են տրամադրված նախնական տեղեկատվությունը և օգտագործում են ռիսկերի կառավարման համակարգը, սակայն ամբողջական և որակյալ տվյալներ ստանալու հետ կապված առկա են որոշակի խնդիրներ: *Ճապոնիայի մաքսային ծառայությունը ներկայումս մշակում է EAD-ի վրա հիմնված արհեստական ինտելեկտի վրա հիմնված նոր տեխնոլոգիաներ:*

Ճապոնիայում միջազգային փոստային առաքանիների մաքսային հսկողությունը իրականացվում է հետևյալ եղանակով.

1. Փոստային ծառայության աշխատկիցը հատ առ հատ առաքանիները դնում է սկանավորման սարքի վրա, այնպես որ տեսանելի լինի անհատական բեռնագիրը,
2. Ինքնաշարժ եղանակով առաքանին տեղափոխվում է առաջ և անցնում սկանավորում,
 - Եթե սկանավորման ընթացքում խնդիր չի առաջանում, այսինքն սկանավորման արդյունքում առաքանին համապատասխանում է նախնական տեղեկատվության մեջ առկա տվյալներին՝ առաքանու համար, հասցե, անուն-ազգանուն, ապա ինքնաշարժ եղանակով շարունակվում է առաքնու տեղաշարժը,
 - Եթե սկանավորման ընթացքում խնդիր է առաջանում, ապա ազդանշան է ստանում մաքսային ծառայողը,
3. Ինքնաշարժ եղանակով առաքանին տեղափոխվում է առաջ և անցնում մաքսային տեսազննման սարքի (X-Ray Machines) միջոցով մաքսային տեսազննում,
4. Ինքնաշարժ եղանակով առաքանին տեղափոխվում է առաջ և անցնում առաջին մաքսային ծառայողի մոտով ում առջև առկա են երկու մոնիտորներ՝ նախատեսված մաքսային տեսազննման պատկերների և էլեկտրոնային նախնական տվյալների (EAD) համար,
5. Ինքնաշարժ եղանակով առաքանին տեղափոխվում է առաջ և անցնում ավտոմատատ տեսակավորման սարքի միջով, որը տեսակավորում և տարանջատում է առաջին մաքսային ծառայողի կատարած գործողությունները (օրինակ պետք է ֆիզիկական զննում անցկացնել)

կամ առկա են մաքսային վճարներ,

6. Ինքնաշարժ եղանակով առաքանին տեղափոխվում է առաջ դեպի առաքման:



Ճապոնիայի ներկայացուցիչը ներկայացրեց նաև EAD-ի որակի վերաբերյալ որոշակի տեղեկատվության և նշեց, որ այն դեռ բավարար մակարդակի չի հասնում, քանի որ շատ դեպքերում տեղեկությունները տրամդրվում են թերի:

ԱՄՆ մաքսային ծառայության ներկայացուցիչ Կլեատուս Հանթը բացատրեց ԱՄՆ-ում փոստային առաքանիների մաքսային հսկողության նպատակները, գործընթացների պրակտիկան: Նա նշեց, որ օրական 4,5 մլն. փոքր քանակությամբ փոստային առաքանիներ են բաց թողնվում: 2019-ին նրանք 9 սուրհանդակների հետ գործարկեցին փորձնական թեստային նախագիծ, որը նույնպես վերաբերում էր նախնական տեղեկատվությանը: Այս համակարգը տվել է բարձր արդյունքներ:

Մեծ Բրիտանիայի մաքսային խմբի նախագահ Դեյվիդ Պիլքինգթոնը ներկայացրեց իր գաղափարներն այս ոլորտը բարելավելու վերաբերյալ և նշեց, որ Մեծ Բրիտանիայում փոստային ծառայությունն ունի 140,000 աշխատող: Ամեն տարի նրանք ստացել են մոտ 220 միլիոն ծանրոցներ: Փոստային ծառայությունը սերտորեն համագործակցում է մաքսային ծառայության հետ: Բայց կան նաև որոշ խնդիրներ բոլոր ավիաընկերություններից տվյալների ստացման հետ կապված՝

տվյալների ուղարկման ուշացումներ, սխալ ԱՏԳ ԱԱ ծածկագրեր:

Իր ելույթի վերջում նա նշեց, որ էլեկտրոնային առևտուրը հաջողությամբ վերահսկելու և հեշտացնելու համար Մեզ անհրաժեշտ է լավ համագործակցություն, և մենք պետք է բարելավենք տվյալների որակը և քանակը:

Դոկտոր Տանյա Հարինգթոնը, Post Ireland-ի կարգավորման գլխավոր մասնագետը, իր ելույթի ժամանակ մասնակիցներին բացատրեց Իռլանդիայում գործող Փոստային առաքման հսկողության համակարգը: Նա ևս նշեց, որ առանց որակյալ նախնական տեղեկատվության չի կարող լինել որակյալ մաքսային հայտարարագիր: Նրանք նշեցին, որ տեղեկատվության տվյալների որակի հետ կապված առկա են որոշակի խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է սերտ համագործակցություն ՀՄԿ-ի հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ստացվում է, որ բոլոր առաջատար երկրները փորձում են հնարավորինս շատ հավաքագրել նախնական տեղեկատվություն և ժամանակի ընթացքում այդ տեղեկատվությունը դարձնել ավելի որակյալ: Այսպիսով առաջարկում են ուսումնասիրել այս երկրների փորձն առավել մանրամասն և ընտրել լավագույն տարբերակը նախնական տեղեկատվություն ստանալու նպատակով:

2023թ.-ի հունիսի 7-ին կայացած 6-րդ նիստը նվիրված էր թվային տեխնոլոգիաների օգտագործման թեմային՝ գլոբալ տրանսպորտային ցանցի ընթացակարգերն ու լուծումները ներդաշնակեցնելուն:

ՀՓՄ փոստային տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Լատի Մատատան իր շնորհանդեսի ժամանակ նշեց փոստային կապի ոլորտում թվայնացման բարձր կարևորությունը: Նա նաև առանձնացրեց փոստային օպերատորներից Customs Declaration System (CDS)-ի մասին տեղեկատվությունը և ՀՓՄ-ի կողմից մշակված այս համակարգը: Ինչպես նա նշեց, որ CDS-ը պարունակում է նաև նախնական տեղեկատվություն: Ներկայումս ՀՓՄ-ն աշխատում է մաքսային հայտարարագրերի տվյալների հետ CDS տվյալների ինտեգրման ուղղությամբ:

Հոլանդիայի մաքսային ռազմավարության և նորարարության հատուկ խորհրդական Նորբերտ Կուվենհովենը իր ելույթում բացատրեց հոլանդական մաքսային ծառայության պրակտիկան փոստային առաքումների թվայնացման վերաբերյալ: Իր ելույթում նա ընդգծեց, որ իրենք աստիճանաբար օգտագործում

են արհեստական ինտելեկտի վրա հիմնված տեխնոլոգիաներ՝ ռենտգենյան պատկերները վերլուծելու և մաքսային ընթացակարգերի ընթացքում մաքսային հսկողություն ապահովելու համար:

United Nations Conference on Trade and Development (UNCTAD) ծրագրի տարածաշրջանային համակարգող պարոն Զեյվի Սանտոսը իր ելույթի ընթացքում նշեց, որ UNCTAD-ի և ՀՄԿ-ի միջև առկա է սերտ համագործակցություն: **UNCTAD** համակարգերը երկրների մեծ մասի կողմից օգտագործվում են մաքսային նպատակներով, ինչպես նաև կազմակերպությունը ստեղծել է նաև փոստային առաքանիների վերահսկման իր համակարգը: Նշվեց նաև, որ նրանք աջակցում են փոստային ծառայության կողմից CDS-ի վերաբերյալ տեղեկատվության ստացմանը, բացատրվեց The UNCTAD Automated System for Customs Data (ASYCUDA) համակարգի առավելությունները:

Toshiba ընկերության ներկայացուցիչ Յուջի Սակուրայը խոսեց Toshiba-ի արտադրանքի մասին, որոնք օգտագործվում են մի քանի երկրների մաքսային ծառայությունների, ինչպես նաև Ճապոնիայի մաքսային ծառայությունների կողմից՝ փոստային առաքումները վերահսկելու և դրանք անհրաժեշտ անցակետեր հասցնելու համար: Նա նաև պարզաբանեց, որ իրենց հետագա ծրագրերում է սերտ համագործակցությունը մաքսային մարմինների հետ՝ մաքսային հսկողությունը բարելավելու համար: Ներկայումս Ճապոնիայի փոստային ծառայությունն օգտագործում է Toshiba-ի կողմից արտադրված "TT-210" Toshiba նամակների տեսակավորման մեքենա, որի արագությունը ժամում 50,000 նամակ է: Ստորև Ձեզ է ներկայացվում այդ սարքավորման առանձնահատկությունները. **Toshiba "TT-210" Letter Sorting Machine.**

Features : Compact and Low Energy Consumption

1. Almost 60 years business experience since 1965

- In 1968, started the automation of outward sorting.
- In 1989, started the automation of inward sorting in.
- In 1998, started the automation of carrier sequence sorting.

2. Delivery Record : over 2,000 units delivered

- Currently, in Japan, over 1,000 "TT-210"s are in operation.


3. Specifications

- Letter Size: Up to C5.
- Speed: Max. 50,000 letters/hour (BCR mode)
- Outputs: Max. 450 stackers (8-bin type)
- Footprint: L 20m x W 1.8m x H 2.2m (450 stacker model)
- Power consumption: 32kVA
- Can read post codes, addresses, apartment names, recipient names to improve efficiency of sequence sorting.

Toshiba ընկերության ներկայացուցիչը նաև ներկայացրեց մաքսային հսկողության համար նախատեսված սարքավորումները և ծրագրային ապահովումները: Մասնավորապես խոսցվեց Toshiba's Optical Character Recognition (OCR) համակարգի մասին, որով իրականացվում է առաքանիների սկանավորման գործընթացը: OCR համակարգը ի վիճակի է ճանաչել փաթեթների վրա փակցված մաքսային հայտարարագրի ձևաթղթերը և պիտակների բազմաթիվ տեղեկությունները, այնուհետև ինքնաշխատ եղանակով համադրել դրանք նախապես գրանցված տեղեկություններով և անհրաժեշտության դեպքում ահազանգել մաքսային ծառայողներին:

Toshiba's OCR for Customs operation

The OCR system is able to recognize multiple information on the Customs declaration forms and labels affixed to packages, and automatically collate those with pre-registered information, and alert Customs officers and inspectors if needed.



Այնուհետև ներկայացվեց մաքսային տեսազննման համար անհրաժեշտ սարքավորումների վերաբերյալ տեղեկատվություն: Կից էլ, ֆայլով Ձեզ է ներկայացվում նաև ամբողջ գործընթացի շնորհանդեսը, որը ներկայացվեց Toshiba ընկերության ներկայացուցչի կողմից:


Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ Ճապոնիայի մեր գործընկերների հետ համագործակցել և հնարավորության, նպատակահարմարության դեպքում քայլեր ձեռնարկել այդ սարքավորումները ստանալու նպատակով: Ինչպես նաև առաջարկում եմ առավել մանրամասն ուսումնասիրել CDS համակարգը և նպատակահարմարության դեպքում ինտեգրվել դրան: Հարկ է նշել, որ ունենք կոնսուլտային տվյալներ այդ համակարգի ծրագրային մասով պատասխանատուների հետ:

2023թ.-ի հունիսի 7-ին կայացած 7-րդ նիստը նվիրված էր «հուսալի տրանսպորտ՝ համաճարակների ընթացքում և դրանից դուրս փոստային մատակարարման շղթաները պաշտպանելու համար» թեմային:

Կամբոջայի փոստի գլխավոր տնօրեն Սամվիտտը իր ելույթում ներկայացրեց Կամբոջայի փոստային ծառայության աշխատանքային պայմաններն ու ընթացակարգերը, վերջին զարգացումները: Իր ելույթում նա նաև նշել է, որ ներկայումս Կամբոջայի փոստային բաժանմունքում շարունակվում է գոյություն ունեցող համակարգի կատարելագործման նախագիծը:

China Post Group-ի մարքեթինգի փոխտնօրեն Պարոն Յանսուան Թանգը ներկայացրեց Չինաստանի փոստային ծառայության պրակտիկան Covid-19 համաճարակի ընթացքում: China Post-ն ունի իր սեփական ավիաընկերությունները, և նրանք իրենց բեռները տեղափոխում են նաև իրենց ավիաընկերությունների միջոցով: Նշվեց նաև, որ առկա են որոշ դժվարություններ Delivered duty paid (DDP) փոստային առաքումների հետ կապված: Իր ելույթի վերջում առաջարկվեց ստանդարտացնել տեղեկատվական ինտերֆեյսը և բարելավել հետազօծելիությունը ցամաքային փոխադրումների ժամանակ:

International Air Transport Association (IATA)-ի էլեկտրոնային առևտրի, բեռնափոխադրումների և փոստային գործառնությունների ղեկավար Անդրե Մաջերեսը մասնակիցներին բացատրեց այն կարևորությունը, որն իր կազմակերպությունը տալիս է փոստային առաքումների փոխադրմանը: Մինչ օրս IATA-ն ընդգրկում է ավելի քան 300 ավիաընկերություն: Նա նաև ընդգծեց սերտ համագործակցությունը IATA-ի, ICAO-ի, VTAMO-ի և այս երեք կազմակերպությունների կողմից մշակված ուղեցույցների միջև: Իր շնորհանդեսում նա նշեց, որ էլեկտրոնային առևտրի ծավալը 2022 թվականին կազմել է 5,437 տրիլիոն ԱՄՆ դոլար: Այդ իսկ պատճառով նա հատկապես կարևորել է ընթացակարգերի պարզեցումն ու անվտանգության ապահովումը: IATA-ն ՀՓՄ-ի հետ համատեղ հրապարակել է «Փոստի անվտանգության ուղեցույց» -ը:



Եվրոպական հանձնաժողով անդամ Խոյ Կլեմենը մասնակիցներին ներկայացրեց անվտանգության հարցերով ԵՄ Փոստային միության պրակտիկայի վերաբերյալ շնորհանդես: Իր շնորհանդեսի ընթացքում նա կիսվեց գլոբալ խնդիրների մի քանի օրինակներով, որոնց բախվում են մաքսային մարմինները: Իր ելույթում նա նաև նշեց, որ մատակարարման շղթայի վերլուծության եւ նախնական տվյալների հուսալի վերահսկողության ապահովման համար նախնական տեղեկատվությունը մեծ դեր է խաղում, բայց ներկայումս ԵՄ փոստային ծառայությունը նույնպես որոշակի դժվարությունների է հանդիպում EAD ստանալու և մաքսային մարմին տեղեկատվություն տրամադրելու հարցում, սակայն աշխատանքներ են տարվում այդ բացերը շտկելու ուղղությամբ:

2023թ.-ի հունիսի 8-ին շրջայց կատարեցինք Ճապոնիայի Կավասակի փոստի փոխանակման կենտրոնում: Ժամանակը շատ կարճ էր, սակայն հասցրեցինք տեսնել ինչպես են իրականացվում փոստային առաքանիների մաքսային հսկողությունը: Հարկ է նշել, որ տարածքը բավականին մեծ էր, հարմարավետ, կահավորված Toshiba ապրանքանիշի սարքավորումներով: Այնտեղ ծառայություն էին իրականացնում և Ճապոնիայի մաքսային ծառայողները և փոստի աշխատակիցները:

Հաշվետվությունը կազմեցին՝

ՀՀ ՊԵԿ արևմտյան մաքսատուն-վարչության պետ



Գարիկ Մինասյան

ՀՀ ՊԵԿ արևմտյան մաքսատուն-վարչության փաստաթղթային հսկողության
և մուտքերի համակարգման բաժնի պետ



Սաշա Փիլոյան

14.06.2023թ.